

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ*

Հայերենի քերականության մեջ ձևարանությունը համեմատաբար ավելի շատ է ուսումնասիրված, քան շարահյուսությունը, սակայն ձևարանության մեջ կան բազմաթիվ պրոբլեմներ, որոնք կարիք են դրում հետազոտությունների: Բայց ձևարանության ամենից բնդարձակ և հարուստ բաժինն է, որի ուսումնասիրությամբ զբաղվել են հայ քերականագիտության մեջ մի շարք լեզվաբաններ, սակայն բայի վերաբերյալ ամբողջական դիտական ուսումնասիրություն չի եղել:

Սովետահայ քերականության մեջ բայի ուսումնասիրված է հիմնականում իր ձևարանական առանձնահատկությունների ամբողջության մեջ: Մինչև այժմ չկար ամփոփ ուսումնասիրություն արդի հայերենի բայի վերաբերյալ: Ֆիլոլոգիական դիտությունների թեկնածու Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատությունը գալիս է լրացնելու այս բացը:

Աշխատությունը բաղկացած է երեք մասից և հավելվածից:

«Պատմական ակնարկ» բաժնում հեղինակն աշխատել է շարադրել մարքսիստական լեզվաբանության հիմնական դրույթները և քննադատել է Մառի ու նրան հետևողների գեհնիկ սոցիոլոգիական հայացքները լեզվի, մասնավորապես հայերենի վերաբերյալ:

Այնուհետև տրված է հայ քերականագիտության մեջ աշխարհաբար զբաղված լեզվի բայի և նրա խոնարհման քննության համառոտ պատմությունը, սկսած աշխարհաբարի առաջին քերականության հեղինակ Սկրոդերից (18-րդ դ.) մինչև սովետահայ քերականները: Մանրամասն քննված են բոլոր քերականների հայացքները բայի խոնարհման վերաբերյալ, նշված են յուրաքանչյուրի աշխատության արժանիքներն ու թերությունները: Աշխատության այս բաժնում զբաղված են տարբեր քերականների սխեմաները բայի խոնարհման մասին, որոնք փաստական նյութ կարող են ծառայել այդ թեմայով զբաղվողների համար:

Հեղինակը ճիշտ է գնահատում սովետահայ քերականների դերը հայերենի քերականության, մասնավորապես բայական հատկանիշների դիտական վերլուծման ասպարեզում:

Աշխատության երկրորդ մասում հեղինակը մանրամասն քննում է արդի հայերենի բայական կառուցողիկաները, հանդամանորեն վերլուծում բայասեռի, կերպի, թվի, դեմքի, եղանակի, ժամանակի կառուցողիկաները: Ճիշտ են բացահայտված ներգործական, կրավորական, չեզոք սեռի բայերի հատկանիշները: Քննելով բայի սեռը, հեղինակը ցույց է տալիս բայերի պատկանելիությունը տարբեր սեռերի՝ ըստ խոնարհումների: Սա ունի և՛ դիտական, և՛ պրակտիկ մանկավարժական-մեթոդական արժեք: Օրինակ, մանրակրկիտ հաշվումներով հեղինակը պարզել է, որ և խոնարհման բայերի մեծ մասը ներգործական սեռի են, փոքր մասը՝ չեզոք, և խոնարհման բայերը չեզոք սեռի են, բացի 15—20 բայերից, որոնք ներգործական են:

Մինչև այժմ հայ քերականագիտության մեջ կերպի հարցը վերջնական լուծում չի ստացել: Կերպի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Պրոֆ. Արեղյանը կերպ ասելով հասկանում էր գործողության հարաբերումը որոշ ժամանակակետի նկատմամբ, ըստ այդմ էլ բայերին վերագրում էր չորս կերպ՝ կատարվող (գնում եմ), կատարված (գնացել էի, գնացած եմ), կատարելի (գնալու եմ), պարզ (գնացի): Հետևաբար այստեղ ի նկատի է առնված կերպի ստորոգելիական կառուցողիկան: Պրոֆ. Ա. Ղարիբյանը տվել է կերպի խոսքի մասային կառուցողիկայի վերլուծությունը: Հեղինակը անդրադառնալով այդ հարցին գտնում է, որ կերպի խոսքի մասային կառուցողիկան կապված է անդեմ ձևերի ձևարանա-

* Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1954:

կան փոփոխությունների հետ և արտահայտում է գործողության բաղմամբությունը, կրկնությունը, տեղանքությունը: Իսկ կերպի ստորոգելիական կառուցվածքը է բայի միայն եղանակային ձևերի հետ և արտահայտում է գործողության վիճակի կամ քննարկի հարաբերումը որևէ ժամանակակետի: Ընդ. Բարսեղյանը գրում է, որ «հայերենի բայը համարյա կորցրել է իր կերպի խոսքի մասային կառուցվածքը, որը նրա մոտ մնում է իրրե կերպի մնացորդը»: Բայի խոսքի մասային կերպերից այժմ ճանաչվում է միայն բաղմամբական կամ կրկնողական կերպը (ցատկել-ցատկոսել, վազել-վազվել և այլն): Սակայն այս կերպն էլ ընդհանուր չէ բոլոր բայերի համար: Բաղմամբական ածանցով կամ բայարմատի կրկնությամբ քիչ բայեր են կազմվում: Հեղինակը, քննության առնելով բայի ժամանակների դրսևորման միջոցների պրոբլեմը, դալիս է այն եզրակացության, որ «ոչ գերբայները և ոչ էլ օժանդակ բայը, առանձին վերցրած, գործողության կատարման ժամանակ չեն արտահայտում» (էջ 146): Դերբայների արտահայտում են գործողության տարրեր վիճակներ, իսկ օժանդակ բայը՝ տարրեր ժամանակակետեր: Բայի ժամանակը դրսևորվում է գերբայների և օժանդակ բայի միասնությամբ և ոչ թե միայն գերբայով կամ օժանդակ բայով: Բայի ժամանակը գործողության հարաբերումն է տարրեր ժամանակակետերի: Հեղինակը, մեր կարծիքով, ճիշտ է մեկնարկում նաև եղանակի կառուցվածքը, որի վերաբերյալ հայ քերականագիտության մեջ հակասական կարծիքներ են արտահայտված: Միանք շփոթում են եղանակի ձևաբանական կառուցվածքը նախադասության մեջ եղանակավորող բառերով արտահայտվող եղանակների հետ, մինչդեռ վերջինը շարահյուսական բովանդակ է և ոչ մի կապ չունի եղանակի ձևաբանական կառուցվածքի հետ:

Հեղինակը փորձել է վերանայել նաև պայմանական եղանակի տրամաբանական սահմանում: Սովորաբար պայմանական կամ ենթադրական եղանակը սահմանվում է իրրե որոշ պայմանի առկայությամբ կատարվող գործողությունը: Ըստ հեղինակի սահմանման, պայմանական եղանակը ցույց է տալիս «խոսքի մոմենտից հետո կամ մի անցյալ ժամանակակետում կատարվելիք գործողությունը, որի կատարման իսկությունը խոսքի հաստատում է հաստատ համոզմունքով, հաճախ էլ՝ պայմանով կամ ենթադրաբար» (էջ 251): Ընդ. Բարսեղյանը մերժում է այն տեսակետները, որոնց համաձայն կրեմ, կկուր-կում ձևերը համարվում են ըզձական եղանակ (Ստ. Լիսիցյան) կամ մոցվում են սահմանական եղանակի մեջ իրրե սահմանական ապառնի (Պալասանյան): Այս բանում հեղինակը տվել է մի շարք նոր սահմանումներ և վերանայել է բայի խոնարհման սխեման: Ես առաջարկում է հրամայական եղանակի ժամանակը (գրի'ւ, կուրդա') անվանել ոչ թե ներկա, ինչպես մինչև այժմ ընդունված է, այլ ապառնի, ելնելով այն բանից, որ հրամայական եղանակի բայաձևերի դրսևորած ժամանակը որոշելիս ոչ թե պետք է հաշվի առնել խոսքի սուբյեկտի վերաբերմունքը գործողության կատարման նկատմամբ, այլ խոսքի մոմենտի և գործողության կատարման ընթացքի օբյեկտիվ հարաբերությունը: Հրամայական եղանակի ձևերով արտահայտված է ոչ միայն այնպիսի գործողություն, որ պիտի հրամայարարը կատարվի խոսքի մոմենտին կամ նրանից անմիջապես հետո, այլև այնպիսի գործողություն, որի կատարումը պահանջվում է խոսքից հետո ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ ապագայում: Այս կարծիքն, անշուշտ, ճիշտ ելակետ ունի, սակայն դժվար է համաձայնել հեղինակի հետ և հրամայական եղանակի ժամանակն անվանել ապառնի: Դա յուրահատուկ ժամանակ է, որ իր մեջ պարունակում է և՛ ներկայի, և ապառնիի մոմենտ: Մի թե կարելի է համասարույթյան նշան դնել ժամանակի տեսակետից գրելու եմ, կգրեմ, պիտի գրեմ, ձևերի, մի կողմից և գրի՛ր ձևի միջև, մյուս կողմից: Իհարկե ոչ: Այս հարցն, անշուշտ, կարիք ունի հետադադարադարձության: Այդ պատճառով էլ հեղինակը հարցադրումը տեղին է:

Հեղինակն առաջարկում է ըզձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ապառնի ժամանակը (գրելի, կգրելի, պիտի գրելի) վերանվանել անցյալ՝ ըզձական եղանակի անցյալ, պայմանական եղանակի անցյալ, հարկադրական եղանակի անցյալ: Դա պատճառաբանվում է հետևյալ կերպ: Ժամանակի կրկնակի անվանման մեջ երկրորդ անվանումը (օրինակ՝ անցյալի անկատար) ցույց է տալիս գործողության կերպը (բերված օրինակում՝ անկատար կերպ), իսկ ըզձական, պայմանական, հարկադրական եղանակների ձևերը պարզ կերպի են, հետևաբար երկրորդ անվանումը չպիտի ունենան:

Հեղինակը գտնում է, որ «այդ ձևերով արտահայտվում է այնպիսի գործողություն, որը պիտի կատարվեր խոսքի մոմենտից առաջ, ուստի գործողության կատարման ժամա-

նախն անցյալ է, այդ պատճառով էլ պիտի կոչել անվայր: Հեղինակը վերանայել է բայի երկրորդական բաղադրյալ ժամանակների սխեման: Մինչև այժմ հայ քերականագիտություն մեջ երկրորդական բաղադրյալ ժամանակներում ստորոգելիական կառուցուրիաները կապվել են լինել բայի խոնարհված ձևերի հետ: Օրինակ, կարգալիս, կարգացած, կարգալուս զերբայներով կազմվող կարգալիս եմ լինում, կարգացած եմ լինում, կարգալուս եմ լինում ձևերը համարվել են ներկա ժամանակի: Հեղինակը դառնում է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներում խոնարհվում է ոչ միայն լինել բայը, այլ նաև գործողությունն արտահայտող բայը: Այդ ժամանակներում գործողությունն իր տարբեր վիճակներով արտահայտվում է խոնարհվող զերբայով, իսկ ժամանակները և եղանակը՝ լինել բայի փոփոխված ձևերով: Ըստ այդմ էլ բերված ձևերից կարգալիս եմ լինում կլինի սահմանական եղանակի ներկա, կարգացած եմ լինում՝ հարակատար կամ վաղակատար, կարգալուս եմ լինում՝ ապառնի ժամանակ:

Հեղինակի այս սխեման, անշուշտ, նորություն է հայ քերականագիտության մեջ և իր մեջ արտացոլում է երկրորդական բաղադրյալ ժամանակները ավելի ճշգրիտ, թեև ունի որոշ անհստակություն:

Գրախոսվող աշխատությունը դերժ չէ նաև որոշ թերություններից:

Ամենից առաջ պետք է նշել մի շարք վիճելի դրույթներ: Ձի կարելի համաձայնել հեղինակի այն կարծիքին, թե հայերենում չկան անդրադարձ սեռի բայեր: Մի՞թե նույն սեռին են պատկանում «ներա զիռուժն ընդունվեց հանձնաժողովի կողմից» և «Շուտով խարույկը բռնկվեց» նախադասություններում ընդունվեց և բռնկվեց բայերը: Հեղինակը ճիշտ վարված կլիներ, եթե ոչ միայն ընդուներ անդրադարձ, այլև փոխադարձ, նաև կրավորակերպ, չեզոք սեռերի կառուցուրիան (օրինակ՝ «ներանք զրկախառնվեցին և համբուրվեցին»):

Ըղձական եղանակի ապառնի ժամանակի գործողության մասին խոսելով հեղինակը նշում է, որ հոգնակի թվի երկրորդ դեմքի բայաձևերը, կրելով հրամայական շեշտ, բարբառային ձևերի ազդեցությամբ գործածվում են հրամայական եղանակի բայաձևերի փոխարեն և արտահայտում են նաև խոսողի հրամանը: Իրրև այդպիսի օրինակ բերում է «զարկեմ դրան», «բալիեմ զենքը» և մյուս կողմից՝ «սխալեմ», «տք չընես էլ տունս», «ոչ մեկը կենդանի չմնամ», «իմ դերեղմանին դուք մոտենալ» ձևերը:

Սակայն բերված երկու կարգի օրինակները նույն ձևն են: Առաջինները (զարկեմ, բալիեմ) ոչ թե ըղձական եղանակի ձևեր են, այլ հրամայականի (զարկեցեմ, բալիեցեմ) սխալ, բարբառային կազմությունը, որը լինում է, ինչպես հեղինակն է նշել 212 էջում, սոսկածանց ունեցող բայերի անալոգիայով (մտեմ, հասեմ, տեսեմ և այլն):

Հեղինակը պնդում է, որ կրավորական բայերն անցողական սեռի են, քանի որ տրամաբանորեն կրավորական բայերը նույնպես արտահայտում են անցողական գործողություն, բայց ներգործող խնդրից ենթակայի վրա անցնող գործողություն և ոչ հակառակը: Այս տեսակետին չի կարելի համաձայնել հետևյալ պատճառով: Բայերը անցողական և անանցողական սեռի են բաժանվում բայ ենթակայի գործողության և օբյեկտի փոխհարաբերության: Իսկ այդ փոխհարաբերությունը երկու տեսակ է լինում՝ անցողական, երբ գործողությունն անցնում է օբյեկտի վրա, և անանցողական, երբ ենթակայի գործողությունը չի անցնում օբյեկտի վրա:

Կրավորական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը չի անցնում օբյեկտի վրա, այլ ենթական իր վրա է կրում ուրիշի գործողությունը, հետևաբար այդպիսի բայերն անցողական են:

Կրավորական բայերը անցողական համարելու այն պատճառարանությունը, թե տրամաբանորեն սրանք անցողական գործողություն են ցույց տալիս, իրավունք չի տալիս այդ կերպ վարվելու, քանի որ տրամաբանական հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են քերականական հասկացություններին: Տվյալ դեպքում տրամաբանական հասկացությունը հակասում է քերականականին, ինչպես այլ դեպքերում է լինում: Օրինակ՝ կրավորական կառուցվածքի նախադասություններում ենթական իրական օբյեկտն է, բայց ենթակա ենք համարում, իսկ իրական ենթական՝ խնդիր:

Հեղինակը հաճախ խոսում է բայական այնպիսի ձևերի մասին, որոնք ոչ զրական և ոչ էլ խոսակցական լեզվում գործածական չեն: Օրինակ՝ հրամայական եղանակի երկրորդական (բաղադրյալ) ապառնի անկատար (կարգալիս եղի՛ր, արհազելիս եղի՛ր), ապառ-

նի կատարելի (ապառնի) (զբելու եղիւ, կաւդալու եղիւ), սահմանական եղանակի երկրորդական բաղադրյալ ապառնի կատարելի (կաւդալու եմ լինելու և այլն)։

Հեղինակը 311—312 էջերում հավելաժողովոր բայերի մեջ հիշատակում է նաև կաւոդ եմ, վախում եմ ձևերը։ Բայց զրանցից առաջինը բայ չէ, իսկ երկրորդը բարբառային ձև է, որից պետք է խուսափել։

Նույնպես հեղինակի կողմից գրական ձևեր են համարվում նաև մի քանի բայերի բարբառային ձևեր, ինչպես՝ ուռել, դիւլնել, կալնել՝ ուռչիլ, կալչել, դիւլչել բայերի հետ հավասարապես։

Աշխատության վերջում զրկած արգի հայերենի բայերի ցանկը, անշուշտ, կարևոր է հայերենի բայերի ուսումնասիրության համար, սակայն հեղինակը երբեմն բառարաններից վերցրել է այնպիսի բայեր, որոնք արդի հայերենում գործածական չեն։ Այդպես են օրինակ՝ աղբւսաբանել, այալանել, այսահալածել, անգոսնել, անխոնել, անճեսել, ասլաբանել, ապաւովել, արաւչազործել, արսել և այլն։

Բայացանկում տեղ են գտել նաև գուտ բարբառային մի շարք բայեր, որոնք մասամբ թյուրքական փոխառություններ են և գրական լեզվի մեջ երբեք չեն մտել։ Այդպես են՝ բեզարել, բլանդել, բմբռնել, բնակոել, բուրզոել, բոել, զխկել, բալկսել, բխմել, բրաւել, բրմել, խզարել, խլեկոել, խլեել, խնչել, խելել, խոռել, խորումել, խսսել և այլն։

Բայացանկում յուրաքանչյուր բայի դիմաց նշված է սեռը, որն անշուշտ կարևոր է։ Սակայն որոշ դեպքերում սեռը ճիշտ չի որոշված, օրինակ, սզղանւանել բայը համարված է չեզոք սեռի, իսկ ազղանչել՝ ներգործական, մինչդեռ երկուսն էլ ներգործական են։

Գրքում կան բազմաթիվ վրիպակներ, որոնք արդյունք են անփուլթ սրբագրության։

Վ. ՔՈՍՅԱՆ